

ԱԼԻՇԱՆ ԳԱՐԱՍԱՐԳԻՍԵԱՆ

Ծնած Տֆորթեոլ 1920-ին, մահացած Հայկալ 2004-ին:

Մարդիկ կան որոնք իրենց ստեղծագործական աշխատանքով ու ծառայած գործունեություններով զբաղված կը թողուն իրենց ապրած շրջապատին վրայ ու մահէն ետք ալ կ'ապրին:



Ալիշան Գարասարգիսեան 1942-ին կ'աւարտէ Հ.Բ.Ը.Մ.-ի Մելգոնեան Կրթական Հաստատությունները: Իր մէջ դարձնուած էր Հայ ազգին ծառայելու նուիրական ոգին:

Հայկալի մէջ ոգեւորութեամբ աշխատեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան շարքերէն ներս: Մեծապէս նպաստեց Միութեան գործունեութեան ընդարձակման եւ դարձաւ փնտռուած վարչական ղեկավարը: Հիմնադիրն է Հայկալի Թ.Մ.Մ.-ին եւ երկար տարիներ վարած է ատենակցութիւնը այդ միութեան վարչութեան:

Աւելի քան քսան տարի ղեկավարած է Ռ.Ա.Կ.-ի Սուրիոյ եւ Յորդանանի շրջանակը:

Տասնամեակներ շարունակ ծառայած է Հ.Բ.Ը.Մ.-ի շրջանակին որպէս Սուրիոյ Կրթական Յանձնախումբի ատենակց:

Ան հանդիսացաւ Հայկալահայ գաղութի պատմութեան ոչ միայն մասնակիցներէն մին, այլ՝ կերտողներէն:

Անոր անունը անառարկելիորէն շողկալուած պիտի մնայ Հայկալի Թ.Մ.Մ.-ի եւ Ռ.Ա.Կ.-ի վերջին 50 տարիներու գործունեութեան հետ, որպէս շինարար ճարտարագետ եւ որպէս ղեկավարը:

(Օգտագործուած աղբիւր՝ «Ջարթօնք» օրաթերթ)

ԱՆԴՐԱՆԻԿ ՓՈԼԱՏԵԱՆ

Ծնած Հայկալ 1929-ին, մահացած Նիւ Ճըրզի Փետրուար 2005-ին:

Գրող, խմբագիր, հրատարակիչ եւ հասարակական գործիչ, 1950-ին աւարտած է Հ.Բ.Ը.Մ.-ի Մելգոնեան Կրթական Հաստատութեան վարժապետանոցի բաժինը: 1959-ին վկայուած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն «Պսակաւոր Արուեստից» տիտղոսով, պատմութեան եւ քաղաքական գիտութեան ճիւղերուն մէջ:



1954-1955 խմբագիրը եղած է Պոսթոնի «Պայքար» օրաթերթին:

1955-1956 խմբագիր՝ Ֆրեզնոյի «Նոր Օր» եւ օրեկային:

1956-ի Հոկտեմբերէն սկսեալ գտնուած է Հ.Բ.Ը.Մ. Միութեան ծառայութեան մէջ եւ վարած պատասխանատու պաշտօններ:

- Վարիչ քարտուղար Հ.Բ.Ը.Մ.-ի Ոսկեայ Յոբելեանի Կրթական եւ Մշակութային Յանձնախումբին:
- Վարիչ-անօրէն Միութեան Նիւ Եորքի ռատիոժամի:
- Աւելի քան 35 տարի պատասխանատու խմբագիր եղած է Հ.Բ.Ը.Մ.-ի «Յուշարար-Միութիւն» պաշտօնաթերթին:

Հիմնադիրն է Հ.Բ.Ը.Մ.-ի Սան Փաուլոյի մասնաճիւղին:

1971-1979-ին ատենակցութեան ղեկավար Մշակութային Միութեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Կեդրոնական Վարչութեան:

1983-1995-ին ատենակցութեան ղեկավար Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան:

Փոլատեանի անունը սերտօրէն կապուած է հայկական տիպ ու տառին հետ. բացի 40 տարուան խմբագրական հրատարակչական վաստակէն, իր յղացքին եւ նախաձեռնարկ ոգիին կը պարտինք այսօր հայերէն լեզուով դարձատիպ (ՕՏՄԵԹ) տպագրութիւնը որ ներկայիս գործնական դարձած է բովանդակ Սփիւռքի մէջ:

Փոլատեան հրատարակած է «Նրբեան Հայրիկ» ընտիր գիրքը, երկասիրած է «Պատմութիւն Արաբիկի Հայոց» ծառայուել երկը շուրջ 1100 էջ, «Շահան Շահնուր - Ծննդեան 100-Ամեակ» հատորը՝ Շահան Շահնուրի կեանքին ու գործին ուսումնասիրութիւնը:

1993-ին Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը բարձրօրէն գնահատելով իր երկարամեայ եւ արդիւնաւոր ծառայութիւնը, Անդրանիկ Լ. Փոլատեանը Միութեան պատուոյ անդամ անուանուած է:

(Օգտագործուած աղբիւր՝ «Հերք եւ Բերք» հատորը)

ՅԱԿՈՒ ՊՈՏՐՈՒՄԵԱՆ

Ծնած Հայկալ 1941-ին, մահացած Պէյրութ 2004-ին: Հ.Բ.Ը.Մ.-ի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ ուսանող 1954-1959 տարիներուն:

Երեւանի փոլիթեքնիքէն վկայուած է որպէս ճարտարագէտ 1968-ին:

Եղած է յեղափոխաշունչ հրատարակագիր: Հաւատարմոր Հայ մարդը: Բառին տուէ՛ք ամբողջական իմաստ ու ծանրութիւն, պահանջեցէ՛ք իրմէ կոչուել եւ առաքելութիւն: Լծեցէ՛ք զինք ինքնաբուխ ծառայութեան եւ պաշտօններու ու դարձուցէք զինք բազմաթիւ վարչութիւններու անդամ եւ ատենակց: Շարքային Հայ մն է ան առանց հատուածականութեան սահմանափակումներու: Միակ «կուսակցութիւն»-ը որուն կը հաւատար «Արմենիզմ»-ն էր, իր մտահոգութիւններուն առանցքը՝ հայկականութիւն էր եւ հող հայրենին: Իր սեփական կեանքին գերադոյն արժէք եւ իմաստ տուող ապրում, կենսագործում: Ազատ եւ անկախ մտածողութեամբ յախուռն հայրենասէր մը, առարկայական ճշմարտութեան հետամուտ սկզբունքայնութեամբ: 1986-ին հեղինակած է «Տիեզերքը» գիտական ուսումնասիրութիւնը: «Հայեր 1986-ին» իր հայրենի տպագրութիւնները եւ գեղարուեստական ապրումները կը հրատարակէ 1987-ին:

«Ի՞նչ Ընենք» գիրքը 1991-ին, ձօնուած է Մեծ Եղեռնի 75-ամեակին զոհերու յիշատակին: 1993-ին



«Լուսոյ Տաճար»

«Ազարակը»-ի թարգմանութիւնը՝ ձորձ Օրուէլի «Անիմըլ Ֆարմ» հատորին: (Օգտագործուած աղբիւր՝ «Ջարթօնք» օրաթերթ)

ԱՏՐՈՒՆԻ ՄԱՏՈՒՌԵԱՆ

Ծնած ձէպէլ Մուսա 1936-ին, մահացած Պէյրութ Սեպտեմբեր 2005-ին:

Շրջանաւարտ Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1955-ին:

Տիպար, հեղահամբոյր եւ հաւատարմոր մուսա լեռցի, հայաբոյժ ընտանիքի գաւակ, դաստիարակուած բուխ հայրենասիրութեամբ, որոնց դրսեւորումը աւելիով շեշտուեցաւ ու նուիրագործուեցաւ, երբ պատանի Ատրուսին մեկնեցաւ Կիպրոսի Հ.Բ.Ը.Մ.-ի Մելգոնեան Կրթական Հաստատութիւն իր ուսումը շարունակելու:

Վաղամեռիկ եղբայրը՝ նոյնպէս մանկավարժ, գրող, խմբագիր Պօղոս Մատուռեան, որ իրմէ առաջ Մելգոնեան կը գտնուէր, իր կրտսեր եղբայրը կ'առնէր իր հովանիին տակ եւ հոն անոնք կը թրծուէին ազգային-հայրենասիրական ոգիով ու կը զինուէին մանկավարժական-մտաւորական պաշարով մը, յետագային ամբողջովին նուիրուելու համար իրենց ժողովուրդին եւ հայրենիքին:



Ատրուսին կանուխէն անդամագրուեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան, երբ արդէն իսկ Հ.Բ.Ը.Մ.-ի շարքերուն մէջ էր, եւ այդ զոյգ ազգային կազմակերպութեանց մէջ գործեց ան, տեղ մը գաղափարական, տեղ մըն ալ մանկավարժական ասպարէզներէ ներս:

Հ.Բ.Ը.Մ.-ի Յովակիմեան-Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանը եղաւ այն միջավայրը, ուր Ատրուսին դասաւանդեց հայագիտական նիւթեր, համբերութեամբ, նուիրուածութեամբ ու պարտաճանաչութեամբ, մինչեւ իր հանգստեան կոչուելը 1999 թուին:

1968-ին Հիւսիսեան Հայագիտական Ուսման Հիմնարկի անդրանիկ ընթացակարգներէն կ'ըլլայ:

Հ.Բ.Ը.Մ.-ի Հ.Ե.Ը.-ին պաշտօնաթերթ «Նօսնակ»-ի պատասխանատու խմբագիրը կը դառնայ լման տարի մը (1991-1992):

Ատրուսի Մատուռեան հրատարակած է «Յուշի Ծուկներ», արձակ էջեր - 2000 թուին, «Տաղարան Սիրոյ եւ Գաղափարի» քերթուածներ, 2000 թուին:

(Օգտագործուած աղբիւր՝ «Ջարթօնք» օրաթերթ)

**

Ահաւաստի քանի մը ազնուագոյն հասկեր հազարաւոր այն բերքէն որ մեզի տուաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը իր ութսունամեայ պատմութեան ընթացքին: Անոնք 20-րդ դարու տեւողութեան, թրծուելով Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ, նուիրուեցան հայակերտումի եւ հայապահպանման աշխատանքին: Յրուեցան աշխարհի չորս կողմերը՝ Լոնտոնէն մինչեւ Սիտնի, Հոնկ Գոնկէն մինչեւ Լոս Անճելըս, Հայաստան, Լիբանան, Յունաստան եւ Եգիպտոս: Ուր որ գացին իրենց հետ տարին Մեսրոպի շունչը եւ Կոմիտասի երգը: Յիշելու համար մի քանի անոնցմէ՝ երաժշտագէտ Նիկողայոս Թահմիզեան, խմբավարներ Հրանդ Գէորգեան եւ Սեպուհ Աբգարեան, գրագէտներ Կարպիս Սուրէնեան, Մուշեղ Իշխան, Սմբատ Փանոսեան եւ Սմբատ Տէրունեան, քաղաքական գործիչ Գերսամ Ահարոնեան, պատմաբան Ազատի Նասիպեան-Էքմէքճեան, մարդիկ Եղիշէ Մանուկեան, ուսուցիչ Օննիկ Սարգիսեան, գեղանկարիչ Յակոբ Յակոբեան, եւ շարքը երկար է: Այսօր պատնէշի վրայ են Անիէլ Ճապրայեան-Միսիսեան, Արմէն Իւրնէշեան, Ահարոն Շիրտըմեան եւ Հրաչ Սեփեթճեան:

Հ.Բ.Ը. Միութիւնը 80 տարիներ շարունակ գուրգուրաց, խնամեց ու պահպանեց Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը իբրեւ կենսատու «Լուսոյ Տաճար» հայութեան: Սակայն Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական ժողովը առանց արդարացուցիչ պատճառ տալու որոշած է փակել վարժարանը, փոխանակ զայն դարձրելու 21-րդ դարու արժանի հայակերտումի կեդրոնի մը, որուն այնքան պէտք ունի համայն հայութիւնը այսօր:

Սփիւռքի պահպանումը կենսական նշանակութիւն ունի հայրենիքի հզօրացման գործընթացին մէջ: Իսկ Սփիւռքի յարատեւման մէջ կարեւոր դեր վերապահուած է Հայ դպրոցին: Հ.Բ.Ը. Միութեան նախկին նախագահ Ալեք Մանուկեանի դպրոցաշէն քաղաքականութիւնը լման շրջուած է վերջին տասը տարիներու ընթացքին: Հ.Բ.Ը.Մ.-ի դպրոցները նահանջի մէջ են աշխարհի բոլոր կողմերը: Յունաստանի, Գանատայի եւ Աւստրալիոյ մէջ Հ.Բ.Ը.Մ.-ի դպրոցներու գոյութիւնը փտանգուած է: Աշխարհի մէջ մեզ Հայ պահողը հայերէն լեզուն եւ Հայ մշակոյթն է:

Հ.Բ.Ը.Մ.-ի ծննդեան 100-ամեակն է 2006 թուականին: Հ.Բ.Ը.Մ.-ի ղեկավարութիւնը չի կրնար եւ պէտք չէ սօսել իր 100-ամեակը առանց Մելգոնեան Կրթական Հաստատութեան, այն Հաստատութեան, որ այնքան մեծ դեր խաղաց անոր փառապանծ 100-ամեակի կերտումին մէջ:

Սփիւռքի եւ հայրենիքի համար սուր տագնապի վերածուած է Մելգոնեան Կրթական Հաստատութեան գոյութեան հարցը: Փոխանակ դատարաններու մէջ ամօթալի եւ ծախսալից քաշկուտուքներու, Հ.Բ.Ը.Մ.-ի նախագահը ամէն ճիգ ի գործ պէտք է դնէ ապահովելու համար Մելգոնեան Կրթական Հաստատութեան գոյատեւումը, արժանաւոր յաջորդը դառնալով զինք նախորդող մեծերուն:

ԶԱԻԷՆ ՂԱՐԻՊԵԱՆ